ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«25» հոկտեմբերի 2018 թվականի № 128-Հ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի հոկտեմբերի 15-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 87 փորձաքննության դրական եզրակացությունը, հաշվի առնելով «ՎԱՆԱԿՎԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության 2017 թվականի հուլիսի 19-ի թիվ 77, 2018 թվականի հուլիսի 11-ի թիվ 67, 2018 թվականի հուլիսի 19-ի թիվ 10 գրությունները և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՎԱՆԱԿՎԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/593 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 7/58 հորատանցքից արդյունաբերական (շշալցում) նպատակով 0,2 լ/վրկ ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 6,3 հազ.մ^3 ածխաթթվային հանքային ջրի պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -593 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել Ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,

2) հրավիրել Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում Պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

3) Ընկերության կողմից Պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն, Պայմանագիր, լիազոր մարմնի կողմից փորձաքննություն անցած նախագիծ),

4) ծանուցել Ընկերությանը, որ սահմանված ժամկետներում Պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5) սահմանված կարգով իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի հաշվառումը՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

10/25/2018

X

VERIFIED OCSP 25-Oct-18 17:57:23 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118